



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

№ ԱԽ-4-Ո-1

2015թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ԱՆՑԿԱՑՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ,
ՔՆՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ
ՊԱՀԱՆՁՆԵՐԸ, ՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ,
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՐՑՄԱՆ
ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՀԱՐՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ԿԻՐԱՌՎՈՂ ԳՐԱՎՈՐ ՀԱՐՑԱԹԵՐԹԻՎՆԵՐԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ.

նախագահությամբ՝ *Ն.Նարիմանյանի,*

մասնակցությամբ՝ ԱԽ անդամներ *Լ.Ասրյանի, Մ.Ավանեսյանի, Մ.Արզումանյանի,
Գ.Գրիգորյանի, Ա.Լազարյանի, Հ.Խաչատրյանի,
Կ.Սաղյանի, Մ.Սաֆարյանի, Մ.Ստեփանյանի,*

քարտուղարությամբ՝ *Մ.Ավետիսյանի,*

2015թ. սեպտեմբերի 28-ին Ստեփանակերտ քաղաքում, Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության Գերագույն դատարանի նստավայրում, դռնբաց նիստում
քննարկելով դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով
անցկացվող որակավորման ստուգման գրավոր քննության ձևը, քննական հարցերի
կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները, քննության և
արդարադատության խորհրդում հարցազրույցի կազմակերպման և անցկացման

կարգը, արդարադատության խորհուրդ ներկայացված հավակնորդների վերաբերյալ հարցումների իրականացման կարգը, հարցման շրջանակում ընդգրկված մարմինների ցանկը և հարցման նպատակով կիրառվող գրավոր հարցաթերթիկների ձևը սահմանելու հարցերը և դեկլարվելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական օրենսգրքի 85-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Սահմանել դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքի և բովանդակության նվազագույն պահանջները, քննության և Արդարադատության խորհրդում հարցազրույցի կազմակերպման և անցկացման կարգը, Արդարադատության խորհուրդ ներկայացված հավակնորդների վերաբերյալ հարցումների իրականացման կարգը, հարցման շրջանակում ընդգրկված մարմինների ցանկը և հարցման նպատակով կիրառվող գրավոր հարցաթերթիկների ձևը՝ համաձայն հավելվածների:

2. Սույն որոշումը հրապարակել դատական իշխանության պաշտոնական ինտերնետային կայքում:

**ԼՂՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ